

ԲՄԿ ՊՈԻՀ ՌՌԻՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Ս. Ա. Բալաշյան



Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Միջազգային և Եվրոպական իրավունքի

Հեղինակ՝ Ն.Գ. Աբգարյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Միջազգային մարդասիրական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Միջազգային մարդասիրական իրավունք» առարկան նախատեսված է «Իրավագիտություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների բակալավրիատի ուսանողների համար:

Դասընթացի շրջանակներում ուսանողները կուսումնասիրեն միջազգային իրավունքի նորմերը, որոնք կարգավորում են սուբյեկտների հարաբերությունները միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների ժամանակ:

Սույն դասընթացը նախատեսում է զինված հակամարտությունների գոհերի պաշտպանությանն ուղղված միջազգային իրավական կարգավորումների, ինչպես նաև պատերազմի վարման միջոցների և մեթոդների սահմանափակման և ռազմական գործողությունների վարման այլ կանոնների ուսումնասիրություն և վերլուծություն:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Միջազգային մարդասիրական իրավունք» առարկայի հիմնական նպատակն է ուսանողների մոտ ձևավորել զինված հակամարտությունների իրավունքի ոլորտում համապատասխան տեսական գիտելիքներ, ինչպես նաև գործնական հմտություններ:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները .

- ուսանողներին տալ հիմնական գիտելիքներ զինված հակամարտությունների որակավորման և ժամանակակից զինված հակամարտությունների մասնակիցների իրավական կարգավիճակի մասին,
- ուսումնասիրել միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական նորմերը և սկզբունքները, որոնք ուղղված են պատերազմի գոհերի պաշտպանությանը, ինչպես նաև ռազմական գործողությունների վարման կանոնների սահմանմանը,
- ուսանողների մոտ ձևավորել հիմնական գիտելիքներ միջազգային մարդասիրական իրավունքի իմպլեմենտացիայի, միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար պատասխանատվության վերաբերյալ,
- բացահայտել միջազգային մարդասիրական իրավունքի գործող նորմերի կատարելագործման հիմնական առավել արդյունավետ մեխանիզմները:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը դա միջազգային մարդասիրական իրավունք է՝ որպես միջազգային իրավունքի ճյուղ, իսկ առարկան միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական նորմերն և սկզբունքներն են, ինչպես նաև զինված հակամարտությունների հասկացությունը, տեսակներն ու մասնակիցները:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացումը երթադրում է, որ ուսանողները տիրապետում են «Պետության և իրավունքի տեսություն» և «Միջազգային իրավունք» առարկաների հիմնական հասկացություններին:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Բազային գիտելիքներ զինված հակամարտությունների ժամանակ կիրառվող միջազգային իրավունքի համապատասխան (Lex Specialis) ճյուղի մասին.
2. Զինված հակամարտությունների տեսակավորում ու դրանցից յուրաքանչյուրի դեպքում կիրառելի իրավական կարգավորումների իմացություն.
3. Տարանջատում Ժնևի իրավունքի և Հաագայի իրավունքի միջև.
4. Գիտելիքներ պատերազմական գործողությունների ժամանակ կիրառվող մեթոդների և միջոցների մասին.
5. Պատկերացում ԿԽՄԿ գործունեության վերաբերյալ:

Հմտությունները՝

• գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. Հասկանալ ՄՄԻ դերը ՄԻ համակարգում.
2. Հստակ առանձնացնել զինված հակամարտությունների ժամանակ արգելված զինատեսակներն ու պատերազմ վարելու մեթոդները թույլատրվածներից:

- **ընդհանրական իմացական հմտությունները՝**

3. Տարանջատել ներքին լարվածության իրավիճակները զինված ընդհարումներից, իսկ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումները միջազգային զինված ընդհարումներից.

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- **ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝**

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո աշխատել միջազգային մարդասիրական իրավունքի բազային աղբյուրների հետ.
2. Ունակ է տարբերակել միջազգային բնույթի զինված ընդհարումները ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներից.
3. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ միջազգային մարդասիրական իրավունքի նյութերի վերաբերյալ առաջադրված հարցերին պատասխանելու համար:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացներն անցկացվում են ինտերակտիվ ձևով՝ ուսանողների ակտիվ մասնակցությամբ քննարկումներին՝ նրանց մոտ վերլուծական մտածողության հմտությունների զարգացման նպատակով: Մեմինարը սովորաբար բաղկացած է տեսական հարցերի քննարկումից, որոնք ուսանողից պահանջում են ուսումնասիրել առաջարկվող գրականությունը: Մեմինարներն ուղղված են թեմայի ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքների խորացմանն ու ընդլայնմանը:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Կամբոջական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 32 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	144
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	64
1.1.1.Դասախոսություններ	32
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	34
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	80
1.2.1. Քննություններին նախապատրաստում	36
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	44
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	24
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	20
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգաթք)	քննություն

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Ներածություն	4	2	2
Թեմա 2. Միջազգային մարդասիրական	4	2	2

իրավունքի կիրառման ոլորտը: ՄՄԻ աղբյուրները			
Թեմա 3. Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի փոխհարաբերությունը	4	2	2
Թեմա 4. Ջինված հակամարտություններ	4	2	2
Թեմա 5. Ջինված հակամարտությունների մասնակիցներ	4	2	2
Թեմա 6. Պատերազմի զոհերի պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում	4	2	2
Թեմա 7. Քաղաքացիական օբյեկտների միջազգային իրավական պաշտպանությունը	4	2	2
Թեմա 8. Շրջակա միջավայրի պաշտպանություն զինված հակամարտությունների ժամանակ	4	2	2
Թեմա 9. Պատերազմի միջոցների և մեթոդների միջազգային իրավական կարգավորումը	4	2	2
Թեմա 10. Միջոցների սահմանափակման ընդհանուր սկզբունքները	4	2	2
Թեմա 11. Պատերազմի միջոցների և մեթոդների իրավական գնահատումն ըստ միջազգային մարդասիրական իրավունքի	4	2	2

Թեմա 12. Ռազմական գործողությունների վարման որոշ նոր միջոցների կիրառման իրավաչափությունը	4	2	2
Թեմա 13. Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ). Այլ մարդասիրական կազմակերպություններ	4	2	2
Թեմա 14. Միջազգային մարդասիրական իրավունքի իմպլեմենտացիայի մեխանիզմները ազգային օրենսդրությունում. Պետությունների կողմից միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը	4	2	2
Թեմա 15. Միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների իմպլեմենտացիան ՀՀ ազգային օրենսդրությունում	4	2	2
Թեմա 16. Պատասխանատվության հարցերը ՄՄԻ -ի համատեքստում	4	2	2
Ընդամենը	64	32	32

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Ներածություն

- Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), որպես միջազգային հանրային իրավունքի ճյուղի զարգացման պատմությունը :
- ՄՄԻ-ի դերը միջազգային հանրային իրավունքի համակարգում:

- Jus ad bellum vs. jus in bello:
- ՄՄԻ -ի սկզբունքները:
- Դասընթացի գործնական նշանակությունը:

Թեմա 2. Միջազգային մարդասիրական իրավունքի կիրառման ոլորտը: ՄՄԻ աղբյուրները

- Ratione tempore:
- Ratione materia:
- Ratione loci:
- ՄՄԻ -ի աղբյուրների դասակարգում

Թեմա 3. Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի փոխհարաբերությունը

- միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի ընդհանրություններն ու տարբերությունները:
- միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի հարաբերակցության տեսություններ:
- միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտությունների իրավիճակներում մարդու իրավունքների միջազգային իրավունքի կիրառելիության արդի միտումները:

Թեմա 4. Զինված հակամարտություններ

- միջազգային զինված հակամարտություններ, միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները, որոնք կիրառելի են միջազգային զինված հակամարտությունների ժամանակ:
- ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններ, միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները, որոնք կիրառելի են ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների ժամանակ:
- զինված հակամարտությունների միջազգայնացման հիմնախնդիրները:

Թեմա 5. Զինված հակամարտությունների մասնակիցներ

- Կոմբատանտներ և ոչ կոմբատանտներ. ռազմագերիի կարգավիճակ:

- Վարձկանների իրավական կարգավիճակը ՄՄԻ -ի համատեքստում

Թեմա 6. Պատերազմի զոհերի պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում

- "պատերազմի զոհեր" հասկացության միջազգային իրավական բովանդակությունը:
- ռազմագերիների իրավական կարգավիճակը միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում:
- զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանությունը:
- լրագրողների իրավական կարգավիճակը ՄՄԻ -ի համատեքստում

Թեմա 7. Քաղաքացիական օբյեկտների միջազգային իրավական պաշտպանությունը

- Ընտրողականության սկզբունքի իրավական բովանդակությունը:
- "քաղաքացիական օբյեկտ" և "ռազմական օբյեկտ" հասկացությունը միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն: քաղաքացիական օբյեկտների դասակարգում:
- զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների իրավական պաշտպանությունը:

Թեմա 8. Շրջակա միջավայրի պաշտպանություն զինված հակամարտությունների ժամանակ

- շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային իրավական կարգավորումը
- Թեմա 9. Պատերազմի միջոցների և մեթոդների ընտրության միջազգային իրավական կարգավորումը
- պատերազմ վարելու միջոցների և մեթոդների կիրառման իրավական սահմանափակումները:
- ռազմական գործողություններ վարելու արգելված մեթոդներ:

Թեմա 10. Միջոցների սահմանափակման ընդհանուր սկզբունքները

- միջոցների սահմանափակման ընդհանուր սկզբունքների իրավական բովանդակությունը:

- ռազմական գործողությունների որոշակի միջոցների և մեթոդների կիրառումը սահմանափակելու հատուկ պայմանագրեր:

Թեմա 11. Պատերազմի միջոցների և մեթոդների իրավական գնահատումն ըստ միջազգային մարդասիրական իրավունքի

- պատերազմի մեթոդների իրավական բովանդակությունը և մեկնաբանությունը

Թեմա 12. Ռազմական գործողությունների վարման որոշ նոր միջոցների կիրառման իրավաչափությունը

- միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների վերլուծություն՝ հատուկ նոր պատերազմի միջոցների կիրառման համատեքստում.

Թեմա 13. Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ). Այլ մարդասիրական կազմակերպություններ

- ԿԽՄԿ-ի ստեղծում:
- ԿԽՄԿ կանոնադրությունը: ԿԽՄԿ գործունեության սկզբունքները:
- ԿԽՄԿ-ի դերը ՄՄԻ-ի զարգացման գործում:
- Այլ մարդասիրական կազմակերպությունների իրավական կարգավիճակը:

Թեմա 14. Միջազգային մարդասիրական իրավունքի իմպլեմենտացիայի մեխանիզմները ազգային օրենսդրությունում. Պետությունների կողմից միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը

- Միջազգային մարդասիրական իրավունքի իմպլեմենտացիայի մեխանիզմները ազգային օրենսդրությունում:
- Պետությունների կողմից միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության հասկացությունը և մեխանիզմները:

Թեմա 15. Միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների իմպլեմենտացիան ՀՀ ազգային օրենսդրությունում

- ՄՄԻ -ի ոլորտում ՀՀ ներպետական օրենսդրության վերլուծություն:

- ՄՄԻ -ի դրույթների իմպլեմենտացիայի կարգավիճակը ՀՀ ազգային օրենսդրությունում:

Թեմա 16. Պատասխանատվության հարցերը ՄՄԻ -ի համատեքստում

- պետությունների և անհատների պատասխանատվությունը ՄՄԻ -ի պահանջների խախտումների համար:
- Ad hoc միջազգային տրիբունալներ:
- Միջազգային Քրեական Դատարան. Հռոմեական կանոնադրություն:

Թեմա 17. Փախստականների և ներքին տեղահանվածների պաշտպանությունը ՄՄԻ -ի համատեքստում

- փախստականների իրավական վիճակը միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի համատեքստում:
- ներքին տեղահանվածների իրավական կարգավիճակը միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի համատեքստում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Женевские конвенции от 12 августа 1949 года и Дополнительные Протоколы к ним. - М.: МККК. 1997.
2. Jean Marie Henkaerts and Louise Doswald Beck, Customary International Humanitarian Law, volume I: Rules, Cambridge University Press, reprinted with corrections 2009.
3. Marco Sassòli, Antoine A. Bouvier, Anne Quintin, How Does Law Protect in War (2011) ICRC
(available at: <http://www.icrc.org/eng/resources/documents/publication/p0739.htm>)
4. Dieter Fleck, The Handbook of Humanitarian Law in Armed Conflicts, Oxford University Press, 1995.
5. Давид Э., Принципы международного гуманитарного права: Курс лекций, прочитанных на

юридическом факультете Открытого Брюссельского университета. — М.:

Международный

Комитет Красного Креста, 2011.- 1144 с.

6. Yvez Sandoz et al., ICRC, Commentaries to Additional Protocol I.

7. Malcolm Shaw, International Law, 9th edition, Cambridge University Press, 2021.

8. Нильс Мельцер, Международное гуманитарное право: общий курс, справочное издание, МККК.

ԴՍՏԱՎԱՐ ԳՈՐԾԵՐ

1. Advisory Opinion on the Legality of the Threat or Use of Nuclear Weapons, ICJ, 1996;

2. Advisory Opinion on the Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, ICJ, 2004;

3. Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo v. Uganda),

ICJ, 2005;

4. Case Concerning Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (1986) ICJ;

5. Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction, Prosecutor v. Dusko

Tadic, ICTY, 1995.

ԼՐԱՅՈՒՅԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jean Pictet, Development and Principles of International Humanitarian Law, (Martinus Nijhoff

Publishers, 1985;

2. David E. Graham, 'The Law of Armed Conflict and the War on Terrorism' (2006) 80 ILS 331;

3. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов. М., МККК. 2004.

4. Имплементация международного гуманитарного права. Сборник статей и документов. М.,

МККК. 2004.

5. Международный уголовный суд. Сборник документов. Казань: «Центр инновационных технологий». 2004

6. Instructions for the Government of Armies of the United States in the Field (Lieber Code) (1863).

8. Cryier et al, An Introduction to International Criminal Law and Procedure (3 rd ed.), August 2014, CUP.

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և դրա տեղը միջազգային իրավունքի համակարգում

2. Տարբերությունը jus in bello-ի և jus ad bellum-ի միջև
3. Միջազգային մարդասիրական իրավունքի առաջացումն ու զարգացումը
4. Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները
5. Միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուրների համակարգ
6. Միջազգային պայմանագրերը որպես միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուր.
7. Միջազգային սովորույթը որպես միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուր
8. Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի փոխհարաբերությունը
9. Զինված հակամարտությունների տեսակները
10. Կոմբատանտներ և ոչ ոմբատանտներ. Կոմբատանտների և քաղաքացիական անձանց միջև տարբերությունը
11. Վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների իրավական պաշտպանություն
12. Բժշկական ստորաբաժանումների և հիմնարկների, բժշկական և կրոնական անձնակազմի իրավական կարգավիճակը
13. Ռազմագերիների իրավական պաշտպանությունը
14. Պետությունների պարտականությունները ռազմագերիների նկատմամբ
15. Զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտների իրավական պաշտպանությունը
16. Կանանց և երեխաների հատուկ պաշտպանություն միջազգային մարդասիրական իրավունքով: Լրագրողների հատուկ պաշտպանություն
17. Զինված հակամարտությունների ժամանակ «մշակութային արժեքների» պաշտպանություն
18. Զենքի հատուկ տեսակների կիրառումը սահմանափակելու և արգելելու իրավական մեխանիզմներ
19. Պատերազմի արգելված մեթոդներ
20. Ընտրողականության սկզբունքի իրավական բովանդակությունը և իրավական կարգավորումը
21. Ավելորդ վնաս կամ ավելորդ տառապանք պատճառելու անթույլատրելիության սկզբունքի իրավական բովանդակությունը և իրավական կարգավորումը
22. Զինված հակամարտությունների ժամանակ բնական միջավայրի պաշտպանության սկզբունքը
23. Համաչափության սկզբունք, ռազմական անհրաժեշտության սկզբունք. Միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն նախազգուշական միջոցներ ձեռնարկելու պարտավորություններ
24. Պատերազմի միջոցների և մեթոդների օրինականության իրավական գնահատում իրականացնելու պետությունների պարտավորություններ
25. Զանգվածային ոչնչացման գենքի օգտագործման սահմանափակման և արգելման իրավական հիմքերը
26. Միջուկային զենք

27. Պետությունների կողմից միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության ձևերը
28. Պատասխանատվության հարցերը ՄՄԻ-ի համատեքստում. Միջազգային քրեական դատարանների դերը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կատարման ապահովման գործում
29. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեության սկզբունքները, նպատակներն ու խնդիրները: ԿԽՄԿ-ի դերը ՄՄԻ-ի զարգացման գործում
30. ՄՄԻ-ի դրույթների իմպլեմենտացիան ՀՀ կամ ՌԴ ազգային օրենսդրությունում